

ունի որ կառավարութիւնն այս պարագային մէջ ալ չպիտի խնայէ պէտք եղած օգնութիւնն ու խնամքը, Տարակոյս չկայ, թէ այս մեծ հրդեհին աղէտքն ալ աւելնալով՝ արդէն սովու ու սղութեան պատճառաւ տառապեալ ժողովրդեան վրայ, յանձնարինս կը դառնացունէ նոցա վիճակն, Լրագրաց ոմանք հրատարակած էին, թէ Ս. Պատրիարքը մասնաւորապէս հանգանակութեան ալ ձեռնարկած է ի նպաստ մեր այս թշուառ ազգայնոց, բայց ստոյգ չէ այդ հրատարակութիւնը:

*
* *

Վաղը Վանօրէից խորհուրդն ու առաջնորդական յանձնաժողովն միահամուռ նիստ կընեն, վանօրէից և առաջնորդական վիճակաց բարեկարգութեան ընդհանուր ծրագրի մը հիմունքն որոշելու համար: Առաջնորդական յանձնաժողովն այս միահամուռ նստին հարկն զգացած ու առաջարկած է, նկատելով որ վանօրայք ու առաջնորդական սահմանք մեծ յարաբերութիւն ունին թէկ մէկու հետ, և բարեկարգութեան պէտք ունին ինչպէս առաջնորդական վիճակք նոյնպէս և վանօրայք: Կարևոր գործ մը գործած պիտի ըլլայ Պատրիարքարանն, եթէ գէթ այս անգամ՝ յաջողի գործադրել պէտք եղած բարեկարգութիւնը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ:

Արձագանք շարածաթերթի մէջ շարունակաբար տպուածն Վաթուղիկոսական հարցին վերաբերեալ ուշադրութեան արժանի պատմական տեսութիւններ. ցանկալի էր որ այդ խնդրով հետաքրքրվողները ի նկատի ունենային այդ յօդուածները:

*
* *

Յայտնի է որ անցեալ տարի ունեցանք Հայ ուսուցչական ընդհանուր ժողով. ցանկալի էր որ, եթէ ոչ ընդհանուր ժողովի օրագրութիւնները, գոնէ դպրոցաց ծրագիրները կազմող մասնաժողովի աշխատութեանց հետեւանքները հրատարակուէին. որով մեր ուսուցիչները թէ կ'օգտուէին իրանց ստանձնած պաշտօնը կատարելու ժամանակ, և թէ ձեռնհաս մարդիկ իրանց խորհրդածութիւններով ապագայ այդ տեսակ ժողովների համար մի փոքր ի շատէ մշակուած նիւթ կը մատակարարէին:

*
* *

Զրի նուազութեան պատճառով Էջմիածնի գաւառի այն մասը, որ ոռոգվումէ Գասաղ գետի ջրով, այս տարի ևս մեծ տագնապի մէջ էր. նոյն նեղութեան ենթարկուեց և Վաղարշապատ գիւղն ու Ս. Էջմիածինը իւր կալուածներով. այդ տագնապի առաջն առնելու համար քանք է լինում Զանգուից Դալմի կոչուած հին առուատեղով նորից ջուր բերել Վաղարշապատու արևելեան կողմի արտորայքը և այգիները ոռոգելու համար: Ի նկատի ունենալով այն նեղութիւնը, որ Ս. Էջմիածնի

միաբանութիւնը կրեց, խմելու ջուր անգամ չը լինելու աղաքաւ, էջ-
միածնի վարչութիւնը նախապատրաստութիւններ է տեսնում մի նոր
քանքան հանելու:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ՝

(ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՔ.)

ԴՊՐՈՅԱԿԱՆՔ.

11 Յուլիսի. Երևանայ Հայ Հոգ. Դպրանոցի Հոգաբարձութեան ան-
ցեալ Գեկտ. 31ին գրած յայտարարութիւնը ի նկատի ունելով, Սինօդը
հրամայումէ Կոնսիստորիային, սաստիկ պատուիրել Երևանայ եկեղե-
ցեաց Երեսփոխաններին, որ նորա 1876 թուի 19 Նոյեմբ. Հանգ. Վե-
հափառ Հայրապետի հաճութեամբ որոշուած զրամները 1876 թուից
մնացած ապագիկներով վճարեն Հոգաբարձութեանը. ի հակառակ
դէպս, կենթարկուին խստագոյն պատասխանատուութեան:

18 Յուլիսի. Թիֆլիզի Առաջնորդ Գեր. Արիստակէս Սրբ. Եպիսկոպո-
սի տարւոյս Յունիսի 2ին գրած յայտարարութիւնը ի նկատի ունենա-
լով՝ Սինօդը ի տեղի՝ իւր հրաժարականով արձակուած Պ. Գէորգ Բար-
խուդարեանի, վերահաստատումէ Թիֆլիզի Թեմական Տեսուչ Պ. Ղա-
զարոս Աղայեանին:

29 Յուլիսի. Երևանայ Փոխանօրդը Յուլիսի 4ին գրած յայտարարու-
թեամբ յայտնումէ թէ, Երևանայ Ս. Գայիանեան և Սահականուշեան
Օրիորդ. Հայ Հոգե. դպրոցաց Հոգաբարձութիւնը ըստ առաջարկու-
թեան Հոգաբարձու Պ. Վարդան Եղիազարեանի, ի յարգանս թագա-
դրութեան Կայսերն Ռուսաց Ալէքսանդր Գ.ի որոշել է Ա. իւրաքան-
չիւր դպրոցում ձրիաբար պահել երկ երկու աղքատ աշակերտուհի, հո-
գալով նոցա հանգերձները, ուսման վարձը և ուսման բոլոր պարագա-
ները. Բ. Առաջնորդական մայր եկեղեցում ի ներկայութեան երկու
դպրոցաց Հոգաբարձուաց, ուսուցչաց, աշակերտուհեաց և վարժու-
հեաց հանդիսաւոր Ս. Պատարագ և գոհացողական մաղթանք կատա-
րել. Գ. թագադրութեան օրը ճրագալոյց անել Դպրոցներում և երեք
օր տօն կատարել. Սինօդը հաճ. և հաւան գտնուելով այս որոշման՝ վե-
րահաստատումէ Հոգաբարձութեան որոշումը, և հրամայումէ հրատա-
րակել Արարատ ամսագրի մէջ ի գիտութիւն ընթերցողաց և յօրինակ այլ
դպրոցական հաստատութեանց *):

(*) Որքան խմբագրութեան յայտնի է, այդ տեսակ որոշում չատ հայ Դպրոցական
հաստատութիւնք են տրեւել: